



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՀԻՄՆԱԿԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com)



## **ԱՐՑԱԽԻ ՆՈՐՁՆՏԻՐ ՆԱԽԱԳԱՅ ԲԱԿՕ ՍԱՐԱԿԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻՆ ՄԷՋ**

Չորեքշաբթի, 21 Նոյեմբերի կեսօրին, Ազգային Առաջնորդ այցելեց Արցախի նորընտիր նախագահ Բակո Սահակեան, որ, ինչպես ծանօթ է, «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի աւանդական թելեթոնին ներկայ ըլլալու համար, Լոս Անճելըս ժամանած էր նախորդ շաբաթավերջին:

Նախագահական պատուիրակութեան մաս կը կազմէին Ուաշինկթընի մէջ Արցախի ներկայացուցիչ Տիար Վարդան Բարսեղեան, Արցախի ընկերային հարցերու նախարարուհի Տիկին Նայիրի Ազատեան եւ նախագահի աշխատակազմի անդամներէն՝ մամուլի հարցերու պատասխանատու Տիար Դաւիթ Պապայեան:

Նախագահ Սահակեան եւ իրեն ընկերացող պատուիրակութիւնը Ազգային Առաջնորդարան հասան կեսօրուան ժամը 12:30ին: Անոնք դիմաւորուեցան Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի, պաշտօնական անձնաւորութիւններու, վարչական ու ներկայացուցչական դէմքերու կողմէ, որոնք ծափողջոյններով ընդառաջ եկան պատուիրակութեան:

Առաջնորդ Սրբազանն ու ժողովականութեան ներկայացուցիչները յարգելի հիւրերը առաջնորդեցին «Ս. Տրդատ եւ Ս. Աշխէն» մատուռ, այնուհետեւ, հիւրերն ու հիւրընկալներ համախմբուեցան «Տիգրան եւ Չարուհի Տէր Ղազարեան» սահին մէջ, ճաշի սեղանի շուրջ շարունակելու համար հանդիպումը:

Ներկայ էին Հայաստանի հանրապետութեան Լոս Անճելըսի մօտ գլխաւոր հիւպատոս Տիար Արմէն Լիլոյեան, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան երեց միաբաններէն Գերշ. Տ. Եփրեմ Արք. Թապազեան, Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամ Տիար Խաժակ Տիքիճեան, Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ Տիար Վիգէն Յովսէփեան, Հ.Յ.Դ. Կեդր. Կոմիտէի անդամներ, Զալիֆորսիոյ խորհրդարանի անդամ Տիար Փօլ Գրիգորեան, «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի վարիչ տնօրէն Տիկին Մարիա Միրանեան, Միացեալ Հայկական Հիմնադրամի տնօրէն Տիար Յարութ Սատունեան, Հ.Ս.Ը.Ս.ի, ՀՕՄի եւ Համազգայինի Կեդրոնական ու Շրջանային վարչութեանց ներկայացուցիչներ, Ազգ. Վարժարաններու Խնամակալ Մարմնի անդամներ, հայկական միութեանց ու կազմակերպութեանց ներկայացուցիչներ, որոնց շարքին՝ Դաւթեան-Մարիամեան Կրթ. Հաստատութեան, Հայ Կրթական Հիմնարկութեան,

հրանահայ միութեան ու հայրենակցական միութեանց ներկայացուցիչները, Ազգային Առաջնորդարանի բարերարներ, բարեկամներ, եկեղեցիներու հոգաբարձութեանց ատենապետներ, Տիկնանց Օժանդակ Մարմինի եւ Առաքելութեան Տարածման յանձնախումբի անդամներ: Եւ ճշեմ, որ ճաշի հիւրընկալումը յանձն առած էր Տիկնանց Օժանդակ Մարմինը:

## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԻՆ ՈՂՋՈՅՆԻ ԽՕՍԵՐ**

Տերունական Աղօթքէն ետք, Առաջնորդ Սրբազանը արտասանեց ողջոյնի իր խօսքը: Ան գոհունակութիւն արտայայտեց, որ ազատ, անկախ Արցախի նորընտիր նախագահը, Լոս Անճելըս իր անդրանիկ այցելութեան առիթով, կ'այցելէ Ազգի Տունը հանդիսացող Ազգային Առաջնորդարանը, մանաւանդ որ այս այցելութիւնը տեղի կ'ունենայ «Յայաստան» Հիմնադրամի թելեթոնին առիթով: Ան նկատել տուաւ, որ այս դիմաւորումին ու հիւրընկալութեան մասնակից են Թեմի ժողովականութեան ու բոլոր միութեանց ու կազմակերպութեանց, կրթական համակարգի ու ծխական շրջաններու ներկայացուցիչները, իբրեւ գործնական ու խորհրդանշական արտայայտութիւն՝ Յայաստանին ու Արցախին մեր զօրակցութեան: Ան մաղթեց, որ թելեթոնը պսակուի յաջողութեամբ, ինչպէս նաեւ Վսեմաշուք Նախագահին պաշտօնավարութիւնը ընթանայ բարօրութեամբ: Ան այս առիթով վերահաստատեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հովանիին տակ գործող մեր Թեմին ու գործակից միութեանց զօրակցութիւնը՝ Արցախին ու Յայաստանին:

Խօսք առաւ Ազգ. Վարչութեան ատենապետ Տոքթ. Կարօ Յակոբեան, որ հայրենի հիւրերը ողջունելէ ետք, յայտարարեց, թէ ժողովականութեան ներկայացուցիչներուն կողքին, այս դիմաւորումին մասնակից են մեր Թեմի շրջանին մէջ գործող կազմակերպութիւններն ու միութիւնները. ան ողջունեց ներկայութիւնը պետական, քաղաքական ու միութենական ներկայացուցիչներուն, հրաւիրեց խորհրդարանական Փօլ Գրիգորեանը, որպէսզի արտասանէ իր սրտի խօսքը:

Տիար Փ. Գրիգորեան նահանգային օրէնսդիր մարմինի իր պաշտօնակիցներուն անունով ողջունեց նախագահն ու ընկերակիցները, գոհունակութիւն արտայայտեց, որ ինք ներկայացուցիչն է Յայաստանէն դուրս ամենէն հայաշատ ընտրաշրջանին, եւ վստահութիւն յայտնեց, որ Արցախ յաջողութեամբ պիտի դիմագրաւէ իրեն ուղղուած մարտահրաւերները եւ պիտի հասնի յաղթանակի:

Սրտի խօսք արտասանեց նաեւ Ուաշինկթընի մօտ Արցախի ներկայացուցիչ Տիար Վարդան Բարսեղեան, որ Արցախին ի նպաստ զօրակցութեան համար շնորհակալութիւն արտայայտելէ ետք՝ ներկայացուց նախագահական պատուիրակութեան անդամները:

## **«ՀԻՄՆԱԿԱՆԻՆ ՊԱՅՊԱՆՈՒՄԸ»**

Սրտի խօսք արտասանելու հրաւիրուեցաւ Յ.Յ.Դ. Բիւրոյի անդամ Դոկտ. Վիգէն Յովսէփեան: Ան ողջունեց նախագահական պատուիրակութիւնը եւ վստահութիւն յայտնեց, որ այս տարուան թելեթոնը

Նոր նուաճում մը պիտի աւելցնէ անցեալ տարիներու յաջողութեանց վրայ: Ան ընդգծեց, որ թէեւ իւրաքանչիւր համայնք ունի իր դժուարութիւններն ու մարտահարաւերները, սակայն հաւաքականին ու հիմնականին պահպանումով՝ Հայաստանի ու Արցախի ապահովութեան ու բարգաւաճման նախապայմանով՝ երաշխաւորուած են մեր բոլոր գաղութներուն գոյատեւումն ու զարգացումը: Ան այս առիթով գնահատանք արտայայտեց «Հայաստան» Հիմնադրամի հայրենասուեր գործին համար եւ յաջողութիւն մաղթեց անոր առաքելութեան:

Տիար Յարութ Սասունեան վեր առաւ հայութեան միասնականութիւնը՝ ի նպաստ Հայաստանին ու Արցախին: Ան գոհունակութիւն արտայայտեց Արցախեան Պայքարի նուաճումներուն համար ու յայտարարեց, թէ ինչ որ կիզակետ Արցախի մէջ պայքարի ճամբով ձեռք բերուած է, խաղաղութեան օրերուն ձեռքէ բաց պիտի չձգուի: Ան նշեց նաեւ, որ ողջ հայութիւնը Արցախի կողքին կը կանգնի անոր պայքարին ու դիմագրաւած մարտահրաւերներուն մէջ եւ յոյս յայտնեց, որ Արցախ շահի նաեւ իրաւական ճանաչում:

## **ԳԻՂԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ**

Տոքթ. Կարօ Յակոբեան այնուհետեւ հրաւիրեց Հայաստանի դիւանագիտական ներկայացուցիչը՝ արտասանելու իր սրտի խօսքը: Տիար Արմէն Լիլոյեան ողջունեց ներկաներն ու մանաւանդ Արցախի նախագահին այս անդրանիկ այցելութիւնը, ապա վեր առաւ այն իրողութիւնը, որ այս տարի «Հայաստան» Հիմնադրամը կը նշէ իր 15րդ տարեդարձը, ժամանակաշրջան մը, որ յատկանշուեցաւ Հայաստանին ու Արցախին ի նպաստ անփոխարինելի ու կենսական ծառայութիւններով: Ան յիշեցուց, որ Հայաստանի անկախութենէն ասդին, տեղի ունեցած են կարեւոր իրագործումներ, կազմաւորուած է բանակը, կտրած ենք անցումային փուլը եւ լծուած՝ տնտեսութեան վերականգնումի ու հայրենաշինութեան գործի, եւ այս բոլորին մէջ Հիմնադրամը ունեցած է կարեւոր ներդրում: Տիար Լիլոյեան յիշեցուց, որ այս տարուան թելեթօնը ունի յատուկ կարեւորութիւն ու համապարփակ նշանակութիւն, որովհետեւ անիկա յատկացուած է սահմանամերձ գիւղերու զարգացման ծրագիրներուն: Վերջապէս, ան ներկաներուն ուշադրութիւնը հրաւիրեց այն իրողութեան վրայ, որ հայութիւնը յառաջիկայ տարի, 2008ին, պիտի նշէ երկու 20ամեակ՝ Արցախեան Շարժումին ու Սպիտակի երկրաշարժին տարեդարձները, տարբեր ու անջնջելի զգացումներ արթնցնող 20ամեակներ, որոնք կը խորհրդանշեն հայութեան միասնութիւնը: Ան կոչ ուղղեց, որ հայութիւնը լաւագոյն ձեւով իր մասնակցութիւնը բերէ յառաջիկայ թելեթօնին, որովհետեւ անիկա պիտի ծառայէ նաեւ անկախութեան պահպանման գիւղ վճարելու:

Ապա, Առաջնորդ Սրբազանը յուշանուերներ յանձնեց Արցախի նախագահին ու պատուիրակութեան աղամներուն, ինչպէս նաեւ Արցախի Առաջնորդ Գերշ. Տ. Պարգեւ Արք. Մարտիրոսեանի, որ կամքէ անկախ յարգելի պատճառներով ներկայ չէր այս հանդիպումին եւ սակայն ուղղած

Եր իր ողջոյնի ու օրինութեան խօսքը: Յուշանուէրը կը ներկայացնէր Ազգ. Առաջնորդարանի մատրան մանրատիպ պատկերը:

## **ՔԱՂԱՔԱԿԻՐԹ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՈՐԴԻՈՎ**

Յուսկ յետոյ, սրտի իր խօսքը արտասանելու հրաւիրուեցաւ Արցախի Նախագահը: Տիար Բ. Սահակեան առաջին առիթով ողջունեց ներկաները եւ յանուն պատուիրակութեան, շնորհակալութիւն յայտնեց ցուցաբերուած ջերմ վերաբերմունքին համար: Այնուհետեւ, ան նկատել տուաւ, որ Արցախի ժողովուրդը, Նախագահութեան իր թեկնածութեան շուրջ միաձայնութիւն գոյացնելով՝ նորագոյն դրսեւորումը կատարեց հայութեան միասնականութեան ու միասնութեան, որ այժմ ի սպաս կը դրուի Արցախի պահպանումին ու բարգաւաճման ի խնդիր: Ան շեշտեց, որ Արցախի պետութեան այժմու ծրագիրներուն մէջ առաջնահերթութիւն կը վայելէն գիւղական շրջանները՝ պահպանումի ու բարգաւաճման առումով, իսկ այդ ծրագիրներուն գործնական երեսները կ'ընդգրկեն բնակարաններու ու դպրոցներու շինութիւնը, մանաւանդ, որ այս կարիքներուն շուրջ համախոհութիւն կը տիրէ ժողովուրդին մօտ: Նախագահ Սահակեան վեր առաւ, Արցախի պաշտպանութեան կարիքներուն կողքին՝ մտաւորական ուժի բարելաման կարեւորութիւնը, դիտել տալով, որ Արցախ որդեգրած է քաղաքակիրթ զարգացման ուղին ու իր ընտրական եւ այլ կիրարկումներով, վարկ շահած է միջազգային բեմին վրայ: Խիզախութիւնն ու քաղաքակրթութիւնը որդեգրած ենք իբրեւ զարգացման ու հայրենակերտումի ուղի, հեռու՝ ծայրայեղական արտայայտութիւններէ, շարունակեց ան, ու հաւաստիք տուաւ, որ յառաջիկայ տարեսկիզբին, գործադրութեան պիտի դրուին գիւղաշինութեան ու դպրոցաշինութեան ծրագիրները: Նախագահը նաեւ յայտարարեց, որ իր վարչակազմը անփոփոխ կերպով կը շարունակէ Նախկին իշխանութեան ճշդած ուղին, որ կը մերժէ Արցախի վերադարձը Ազրպէյճանի կազմէն ներս ու այս ընթացքը աննահանջ պիտի շարունակուի, հակառակ Ազրպէյճանի ռազմատենչ արտայայտութիւններուն ու զանազան ոտնձգութիւններուն: Վերջապէս, Արցախի Նախագահը գոհունակութեամբ ու դրուատիքով արտայայտուեցաւ «Հայաստան» Հիմնադրամի հայրենանուէր գործին մասին ու կոչ ուղղեց լաւագոյն ձեւով մասնակցելու թելեթոնին, շեշտելով, որ այդ ճամբով կատարուած օժանդակութիւնները ամենօրեայ բարիքներու կը թարգմանուին Արցախի ու Հայաստանի մէջ: Ան իր խօսքը եզրափակեց նշելով, որ այս հանդիպումներէն իր քաղած լաւ տպաւորութիւնները պիտի փոխանցէ Արցախի ժողովուրդին:

Պաշտօնական բաժինին աւարտէն ետք, Նախագահն ու պատուիրակութեան անդամները մտերմիկ զրոյցի պահ մը բոլորեցին սրահին մէջ, այնուհետեւ, Առաջնորդ Սրբազանն ու ժողովականութեան ներկայացուցիչները հիւրերուն ծանօթացուցին Ազգ. Առաջնորդարանի բաժանմունքները, ապա հրաժեշտ տուին յաջողութեան մաղթանքներով:

## **PRESIDENT OF NAGORNO-KARABAKH BAKO SAHAKIAN VISITS THE WESTERN PRELACY**

On Wednesday, November 21<sup>st</sup>, the newly elected President of the Republic of Nagorno-Karabakh H.E. Bako Sahakian, who was in Los Angeles for the 10<sup>th</sup> international Armenia Fund Telethon, visited the Western Prelacy. The President was accompanied by NKR representative in Washington Mr. Vartan Parseghian, Social Affairs Minister Mrs. Nayri Azadian, and Press Secretary Mr. Tavit Babaian.

Upon their arrival, the President and delegation were welcomed by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, council members, and official guests including Consul General of the Republic of Armenia Armen Liloyan, H.E. Archbishop Yeprem Tabakian, Central Executive Council member Khajag Dikijian, A.R.F. Bureau member Viken Hovsepian, California Assemblymember Paul Krekorian, Armenia Fund President Maria Mehranian, Lincy Foundation Vice-President and United Armenia Fund President Harut Sassounian, representatives of A.R.F. Central Committee, A.N.C., Homenetmen, Board of Regents, and A.R.S. Central and Regional Executives, Prelacy benefactors, Board of Trustees Chairmen, and members of the Davidian-Mariamian Educational Foundation, Armenian compatriotic unions, Prelacy Ladies Auxiliary, and Outreach Committee. The President and delegation were first escorted to the "St. Dertad and St. Ashkhen" Chapel, after which they headed to the "Dikran and Zarouhie Der Ghazarian" Hall for lunch hosted by the Prelacy Ladies Auxiliary.

The reception began with the Lord's Prayer followed by welcoming remarks by the Prelate. The Prelate expressed gratitude for the newly elected President's first visit to Los Angeles and the Prelacy on the eve of the Armenia Fund Telethon. The Prelate wished the President success in his endeavors as well as for a successful Telethon and reaffirmed the unwavering support of the Prelacy and affiliated bodies to Artsakh and Armenia. Executive Council Chairman Dr. Garo Agopian welcomed the guests then invited California State Assemblymember Paul Krekorian to offer his remarks. Assemblymember Krekorian welcomed the President and delegation on behalf of the State Assembly, expressed gratitude for the opportunity to represent the largest Armenian population outside of Armenia, and hoped that Artsakh will overcome the challenges it currently faces. In his brief remarks NKR representative Mr. Vartan Parseghian offered thanks for the show of support and introduced the presidential delegation.

A.R.F. Bureau member Dr. Viken Hovsepian remarked that even though each community has its own difficulties and challenges to overcome, by keeping the general interest of Armenia and Karabakh in mind and working towards their progress we can ensure their prosperity. Mr. Harut Sassounian emphasized that all Armenians throughout the world stands beside the struggle and challenges of Artsakh and expressed hope that the country will soon receive de jure recognition.

Dr. Agopian then invited Consul General of Armenia in Los Angeles Armen Liloyan who spoke of the progress made in Armenia since independence including the formation of the army, the successful transition to democracy, and the revitalization of the economy and the rebuilding of the nation, in which Armenia Fund played a significant role. The Consul General stressed that this year's Telethon is especially important since it will assist border villages. The Prelate then presented the President and his delegation with mementos as well as one for the Prelate of Artsakh H.E. Archbishop Barkev Mardirossian who could not be in attendance.

President Sahakian was then invited to convey his thoughts. The President first greeted the guests and thanked them for their warm welcome. He emphasized the unanimity and unity among the people of Artsakh in safeguarding and advancing their country. The priority at this time is the development of villages, and specifically homes and schools in those areas. The President also stressed that his administration has adopted the same policy as the previous administration in that Artsakh will under no circumstances be returned to the rule of Azerbaijan. In conclusion, the President expressed his appreciation to Armenia Fund for their charitable projects and urged all those in attendance to support the Telethon.

At the end of the official program the Prelate and representatives offered the President and his delegation a tour of the Prelacy and acquainted them with the different departments.